

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայկ ԲԵԶԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ Բանկային գործի և
ապահովագրության ամբիոնի դասախոս

Բանալի բառեր. իրական հատված, գյուղատնտեսություն, արդյունաբերություն,
շինարարություն, տնտեսական աճ

Վերջին տասնամյակներում ֆինանսական համակարգի առավել շատ ճգնաժամային դրսևորումներով պայմանավորված, տարբեր տնտեսագետների և ինստիտուտների կողմից վերստին սկսվեց առաջ քաշվել տնտեսության իրական հատվածի ոլորտների զարգացման և այդ հատվածի շնորհիվ կայուն տնտեսական աճի ապահովման կարևորությունը: Այնուհանդերձ, ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տնտեսության իրական հատված տերմինի էությանն ու բովանդակությանը հազվադեպ է անդրադարձ կատարվում, ինչն էլ մի շարք վերլուծական խնդիրների պատճառ է հանդիսանում:

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսության հատվածային կառուցվածքի առաջին բնորոշումներից մեկը տրվել է Քոլին Քլարկի կողմից, 1940թ. հրատարակված «Տնտեսական առաջընթացի պայմանները» գրքում: Այս աշխատանքում տնտեսությունը դիտարկվում է երեք հատվածների մասին տեսության միջոցով: Ըստ վերջինիս, ժամանակակից տնտեսությունը ունի եռամակարդակ մոդել (three-sector hypothesis): Իր հետագա աշխատություններում հեղինակը նաև երերդային հատվածից առանձնացնում է չորրորդ հատվածը՝ տեղեկատվականը (տեղեկատվական տեխնոլոգիաներ, կրթություն, գիտական հետազոտություններ, գլոբալ մարքեթինգ, բանկային, ֆինանսական և այլ ծառայություններ): Այս տարանջատումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նշված ճյուղերը բուն արտադրության հետ ուղղակի կապվածություն չունեն այլ առընչվում են դրա պլանավորման և կազմակերպման գործընթացի հետ¹: Ե. Ռումյանցևայի հեղինակած «Նոր տնտեսագիտական հանրագիտարանում» «տնտեսության հատված» (сектор экономики, economic sector) տերմինը բնութագրվում է որպես տնտեսական համակարգի տարր, ընդհանուրի մաս, որը դասակարգվում է ըստ հետևյալ առանձնահատկությունների.

- սեփականության ձևի (պետական, մասնավոր, մունիցիպալ),
- արտադրության չափերի (խոշոր (կորպորատիվ), միջին, մանր),
- ներդրումային գործունեության ոլորտների (իրական, ֆինանսական),

¹ Colin Clark, The conditions of economic progress., 1940, 504p

• ճյուղերի (արդյունաբերական, բանկային և այլն)²:

Սակայն Ե. Ռումյանցևան փաստորեն բավարարվում է միայն իրական հատվածի սահմանազատմամբ՝ որպես դասակարգման հիմք նշելով ներդրումային գործունեության ուղղությունը (տվյալ դեպքում նկատի ունենալով լայն առումով ողջ նյութական արտադրության ոլորտը): Առանձին իրական հատվածի բնորոշումը բացակայում է: Մեկ այլ գիտնական՝ Ջայցևի սահմանման համաձայն՝ տնտեսության իրական հատվածը իրենից ներկայացնում է մրցունակ և բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկում, որի նպատակն է բավարարել սպառողների պահանջմունքն երը արտաքին և ներքին շուկաներում³: Ըստ մեկ այլ տեսակետի՝ «տնտեսության հատվածը» մակրոտնտեսության խոշոր մասն է, որն օժտված է համատեղելի ընդհանուր բաղադրիչներով, ինչը հնարավորություն է տալիս առանձնացնելու այն տնտեսության մյուս հատվածներից՝ տեսական կամ գործնական նպատակներով: Իրական հատվածը վերաբերում է տնտեսության արտադրական հատվածին, որն անմիջականորեն կապված է նյութական արտադրության, շահույթի ստացման և բյուջեի համալրման հետ⁴:

Ալնհայտ է, որ վերոնշյալ սահմանմամբ ևս իրական հատվածը ներառում է մակրոտնտեսության մեջ ձեռնարկատիրության այն մասը, որը զբաղվում է նյութական բարիքների արտադրությամբ, այլ կերպ ասած՝ չի ներառում ծառայությունների ոլորտը: Հատկանշական է, որ այստեղ ընդգծվում է իրական հատվածի ևս մի բնութագրիչ, այն է՝ շահույթի հետապնդումը, ինչն էլ իր հերթին ենթադրում է համապատասխան հարկերի վճարում և այս առումով՝ բյուջեի համալրում: Այստեղ, իհարկե, «մրցունակ» բառը մեզ հուշում է, որ պետք է նկատի առնել շահույթ հետապնդող ձեռնարկատիրության ոլորտը, իսկ ինչ վերաբերում է բարձր տեխնոլոգիաներին, նկատենք, որ չնայած այդ ոլորտը ևս ներառվում է իրական հատվածի կառուցվածքում, սակայն միշտ չէ, որ իրական հատվածի թողարկած արտադրանքը կարող է բարձր տեխնոլոգիական լինել (օրինակ՝ գյուղմթերքների ավանդական արտադրությունը): Մասնագիտական գրականության մեջ «իրական հատվածը» ներկայացվում է նաև որպես տնտեսավարող այն սուբյեկտների ամբողջությունը, որոնց հիմնական գործունեությունը ապրանքների արտադրությունն է և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումը: Շահույթ չհետապնդող կազմակերպությունները դուրս են մնում իրական հատվածի շրջանակներից⁵: Համաձայն այս բնորոշման՝ իրական հատվածը առանձնաց-

² Румянцева Е. Е. Новая экономическая энциклопедия. М., 2005, с 478:

³ Зайцев Н. Л. Краткий словарь экономиста. М., 2008, с 224

⁴ Копурлин В. Н., Остапенко Д. В. Новый экономический словарь. Ростов-на-Дону, 2008, с 428:

⁵ Сергиенко Я. В. Финансы и реальный сектор. М., 2004, с 9

վում է ֆինանսական հատվածից, սակայն ծառայությունների ոլորտի գերակշիռ մասը, որը չի վերաբերում ֆինանսական ծառայություններին, ներառված է իրական հատվածում, ինչը ևս ճիշտ համարել չենք կարող:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը բերված սահմանումները և դատողությունները, կարող ենք ասել, որ տնտեսության իրական հատվածը խոշոր, միջին և փոքր այն առևտրային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնց հիմնական գործունեությունը ուղղված է շուկայում սպառողների նյութական պահանջմունքները բավարարող ապրանքների արտադրությանը: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած պարբերական զեկույցներում⁶ առանձնացվում են տնտեսության հետևյալ հատվածները՝ իրական, հարկաբյուջետային, ֆինանսական, արտաքին, սոցիալ-ժողովրդագրական: Սակայն, տվյալ դեպքում իրական հատվածի համատեքստում դիտարկվում է ամբողջ համախառն թողարկումը ինչպես արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, այնպես էլ տրանսպորտի, կապի, առևտրի և այլ ծառայությունների ոլորտներում:

Մեր կարծիքով, վերլուծության այսպիսի մոտեցման դեպքում «իրական հատված» տնտեսագիտական տերմինի կիրառությունը միարժեքորեն սխալ է, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, տնտեսության իրական հատվածը ներառում է միայն նյութական արժեքների ստեղծման ոլորտը, և, հետևաբար, տրանսպորտը, կապը, առևտուրը, ինչպես նաև մնացած այլ ծառայությունները չեն կարող դիտարկվել իրական հատվածում: Համաշխարհային բանկի ամենամյա «Համաշխարհային զարգացման ցուցիչները» (World development indicators) իրապարակման մեջ, սկսած 2009 թվականից, կիրառվում է 1989թ. ՄԱԿ-ի ընդունած՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման միջազգային ստանդարտի 4-րդ՝ վերանայված տարբերակը (ISIC rev. 4)⁷: Համաձայն «Համաշխարհային զարգացման ցուցիչների», աշխարհի երկրների համախառն թողարկման ծավալները ներկայացվում են գյուղատնտեսության, արդյունաբերության և ծառայությունների ոլորտներով, որոնք ըստ ISIC խմբավորում 4-ի՝ համապատասխանաբար ներառում են 1-5, 10-45 և 50-99 ենթաբաժինները⁸: Համաձայն ընդհանրացված սահմանումի՝ տվյալ դեպքում տնտեսության իրական հատվածը կներառի ISIC խմբ. 4-ի A-F բաժինները, մասնավորապես՝

⁶ Տես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ. հունվար-հունիսին:

⁷ <http://www.unstats.un.org>, International Standard Industrial Classification of All Economic Activities, Revision 4 (ISIC rev. 4):

⁸ "World Development Indicators 2009", 2010:

բաժին A – գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն (01, 02 ենթաբաժիններ),

բաժին B – ձկնորսություն (05 ենթաբաժին),

բաժին C – լեռնամետալուրգիա և հանքագործական արդյունաբերություն (10 14 ենթաբաժիններ),

բաժին D – մշակող արդյունաբերություն (15-37 ենթաբաժիններ),

բաժին E – էլեկտրականության, գազի և ջրի մատակարարում (40, 41 ենթաբաժիններ),

բաժին F – շինարարություն (45 ենթաբաժին):

Ընդհանրացնելով տնտեսագիտական գրականության բնորոշումները, կարող ենք նշել, որ ընդհանուր առմամբ տնտեսության իրական հատվածը իրենից ներկայացնում է առևտրային կազմակերպությունների ամբողջություն, որոնց գործունեությունը ուղղված է շուկայում սպառողների նյութական պահանջմունքները բավարարող ապրանքների արտադրությանը:


Հիմնվելով միջազգային ստանդարտների վրա, 2009 թվականից ՀՀ-ում կիրառվող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ, հմբ.2)⁹ հիման վրա սահմանվել են այն ոլորտներն ու ճյուղերը, որոնք կարող են վերագրվել տնտեսության իրական հատվածին: Այդ ճյուղերն են հանդիսանում.

- Գյուղատնտեսություն,
- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում,
- Մշակող արդյունաբերություն,
- Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում,
- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում,
- Շինարարություն¹⁰:

Այսպիսով, լայն առումով՝ տնտեսության իրական հատվածը իր մեջ ներառում է գյուղատնտեսության, արդյունաբերության և շինարարության ոլորտները: Այժմ վերլուծենք ՀՀ տնտեսության ոլորտների թողարկման ծավալների դինամիկան: Գծապատկեր 1-ում պատկերված է տնտեսության իրական հատվածի ոլորտների թողարկման ծավալների դինամիկան 2000-2016թթ.: Գծապատկերից պարզ է դառնում որ 2008թ. ճգնաժամային անկումներից հետո 2009-2015թթ. գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը շարունակական աճ են գրանցել: Ի տարբերություն սրա կայուն-անկումային է եղել շինարարության ցուցանիշը:


⁹ Աղբյուրը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. հունիսի 3-ի թիվ 372-Ն հրաման

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. հունիսի 3-ի թիվ 372-Ն հրաման



Գծապատկեր 1: ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման դինամիկան 2000-2016 թթ., (մլն դրամ)

Անդրադառնալով 2016 թվականին, պետք է նշենք, որ այն առանձնացավ արդյունաբերական արտադրանքի ծավալերի 6.7 տոկոս աճով, սակայն դրա հետ մեկտեղ անկում արձանագրվեց գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում համապատասխանաբար 5.2 և 10.8 տոկոսներով: Անկումային կոնտեքստ էր պարունակում նաև 2016 թվականը, որը հիմնականում կապված էր միջազգային տնտեսական փոփոխություններով, մասնավորապես ռուսական ռուբլու արժեզրկումով, ինչը հետևանք հանդիսացավ այդ երկրի նատմամբ կիրառված սանկցիաներին: Հասկանալու համար կայուն իրական աճի գնահատականը, ուսումնասիրենք նաև ցուցանիշների արձանագրած աճը նախորդ տարվա համեմատությամբ:



Գծապատկեր 2: ՀՀ տնտեսության իրական հատվածի ոլորտների աճի դինամիկան 2000-2016 թթ., (%-նախորդ տարվա համեմատ)


Ինչպես երևում է գծապատկերից, դիտարկվող ժամանակահատվածում համեմատաբար կայուն աճ է դրսևորվել արդյունաբերության ոլորտում, 2008թ. ճգնաժամային անկումից հետո միջին տարեկան աճը կազմել է 7,7 տոկոս: Առավել մեծ տատանումներ է արձանագրվել շինարարության ոլորտում, 2000-2007թթ., երկրում առկա շինարարական բումի պայմաններում ոլորտի միջին տարեկան աճը կազմեց շուրջ 30 տոկոս, 2002թ. հասնելով ընդհուպ 45 տոկոսի: Սակայն 2008-ին այն արձնագրեց նաև ամենամեծ ան-

կունը՝ կազմելով -37,4 տոկոս: Ճգնաժամային շրջանի ավարտից հետո անկունը շարունակվեց, թեև առավել կայուն տեմպերով: Անդրադառնալով տնտեսության մեջ իրական հատվածի զբաղեցրած դերին, կարևոր է ուսումնասիրել վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում: Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներից ակնհայտ է դառնում, որ չնայած այս տարիներին արձանագրված ՀՆԱ-ի աճին, վերջինիս մեջ գնալով նվազել է տնտեսության իրական հատվածի տեսակարար կշիռը, 2016 թվականի կազմելով 59,8 տոկոս:

Աղյուսակ 1: Իրական հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 2005-2016թթ., (%)

Իրական հատված/ՀՆԱ %	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
	77.1	75.9	71.3	70.4	64.1	66.8	68.3	69.0	64.6	64.2	62.3	59.8

Այս տեղեկանքը խոսում է այն մասին, որ Հայաստանի տնտեսությունը ընթանում է տնտեսական աճը ոչ իրական հատվածի զարգացման միջոցով ապահովելու ճանապարհով: Սա թեև ունի դրական կողմեր, սակայն, իրական հատվածի միջոցով ապահովված տնտեսական աճը մշտապես համարվում է ավելի հուսալի, և նման կառուցվածք ունեցող տնտեսությունը ավելի հեշտ է դիմագրավում ցնցումներին: Կառուցվածքային հարցի վերաբերյալ առավել լիարժեք պատկերացում ունենալու համար ներկայացնենք նաև ռական հատվածի կառուցվածքն ու ոլորտների տեսակարար կշիռը:



Գծապատկեր 3: ՀՀ տնտեսության իրական հատվածի ոլորտների տեսակարար կշիռները 2007-2016 թթ., (%-իրական հատվածի մեջ)

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, դիտարկվող ժամանակահատվածում գյուղատնտեսության զբաղեցրած մասնաբաժինը էականորեն չի

տատանվել, գտնվել է 30 տոկոսի սահմաններում և վերջին 3 տարիներին արձանագրել է որոշակի նվազում:

Իրական հատվածի մեջ աստիճանաբար տեսակարար կշիռը ընդլայնել է արդյունաբերության ոլորտը, ինչի արդյունքում 2016 թվականին ոլորտի տեսակարար կշիռը մոտ է եղել 50 տոկոսին: ԻՆչ վերաբերվում է շինարարության ոլորտին, ապա այն իր պիկի վրա է եղել 2008 թվականին, երբ զբաղեցնում էր իրական հատվածի շուրջ 40 տոկոսը, որից հետո ոլորտը արձանագրել է նվազում և 2016 թվականի կազմել է մոտ 15 տոկոս:

Ամփոփելով վերլուծությունը, պետք է փաստենք, որ իրական հատվածը եղել է և շարունակում է մնալ տնտեսության կայուն զարգացումն ապահովող հիմնական բաղադրիչը, որի տեսակարար կշիռը տնտեսության մեջ գնալով նվազում է: Թեև վերջին տարիներին տնտեսական աճը ի հաշիվ ոչ իրական հատվածի բավականին դրական ազդակներ է ապահովում տնտեսության համար, սակայն երկարաժամկետում, տարբեր ցնումների ազդեցությամբ կարող է խաթարվել կայուն տնտեսական զարգացումը, ուստի, կրևոր է և անհրաժեշտ որդեգրել այնպիսի քաղաքականություն, որը կընդլայնի իրական հատվածի տեսակարար կշիռը, այդպիսով ապահովելով երկարաժամկետ կայուն տնտեսական զարգացման ամուր հիմքեր և հնարավորություններ:

Հայկ ԲԵԶԱՆՅԱՆ

**Տնտեսության իրական հատվածի էությունն ու զարգացման դինամիկան
Հայաստանի Հանրապետությունում**

Բանալի բառեր. իրական հատված, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն, տնտեսական աճ

Վերջին տասնամյակներում, ֆինանսական համակարգի առավել շատ ճգնաժամային դրսևորումներով պայմանավորված, տարբեր տնտեսագետների և ինստիտուտների կողմից վերստին սկսվեց առաջ քաշվել տնտեսության իրական հատվածի ոլորտների զարգացման և այդ հատվածի շնորհիվ կայուն տնտեսական աճի ապահովման կարևորությունը: Հոդվածում ներկայացվում է տնտեսագիտական գրականության մեջ տնտեսության իրական հատված տերմինի էությունն ու բովանդակությանը վերաբերվող հարցեր, ինչպես նաև անդրադարձ է կատարվել Հայաստանի տնտեսության իրական հատվածի ոլորտների կառուցվածքին, տնտեսության մեջ ունեցած տեսակարար կըշռին և զարգացման դինամիկային:

Айк БЕДЖАНИЯН

Динамика сущности и развития реального сектора экономики в Республике Армения

Ключевые слова: реальный сектор, сельское хозяйство, промышленность, строительство, экономический рост

За последние десятилетия различные экономисты и институты вновь начали придавать важность развитию отраслей реального сектора экономики и благодаря этому сектору обеспечению стабильного экономического роста, что обусловлено растущим числом кризисных проявлений в финансовой системе. В статье представлены вопросы, касающиеся сущности и содержания термина “реальный сектор экономики” в экономической литературе, а также затронуты вопросы структуры реального сектора экономики Республики Армения, удельного веса в экономике и динамики развития.

Hayk BEJANYAN

The Essence and Development Dynamics of the Real Sector of Economy in the Republic of Armenia

Key words: agriculture, real sector, industry, construction, economic growth

Over the recent decades, conditioned by the increased manifestations of crisis in the financial system, different economists and institutions began to move forward the importance of the development of real sector fields of economy and of ensuring stable economic growth due to the latter again. The article presents issues on the essence and content of the term “real sector of economy” in the economic literature, as well as it touches upon the structure of the real sector fields of economy of the Republic of Armenia, its share in economy and development dynamics.